

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-99 օրենքի 1-ին հոդվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի>> (այսուհետ՝ Կանոնագիրք) 4-րդ հոդվածի առաջին պարբերության երրորդ նախադասությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 2. Կանոնագրքի 65-րդ հոդվածի հինգերորդ պարբերությունում <<կամ ավագային>> բառերը հանել:

ՀՈՂՎԱԾ 3. Կանոնագրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասում 94-րդ հոդվածի 7-րդ մասում և 98-րդ հոդվածի 4-րդ մասում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով:

ՀՈՂՎԱԾ 4. Կանոնագրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասում և 125-րդ հոդվածի 3-րդ մասում <<ավագների>> բառը փոխարինել <<սերժանտների>> բառով:

ՀՈՂՎԱԾ 5. Կանոնագիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <<126.3.>> և <<126.4.>> հոդվածներով.

<<ԳՆՂԻ (ԲՐԻԳԱԴԻ) ՍԵՐՃԱՆՏԸ

Հոդված 126.3. Գնդի (բրիգադի) սերժանտը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ գնդի (բրիգադի) ստորաբաժանումների սերժանտների ուսուցման, զինվորական դաստիարակության, կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի, գնդի (բրիգադի) ստորաբաժանումների սերժանտների հետ մարտական պատրաստության պարապմունքների որակով անցկացման, նրանց մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացման համար:

Նա ենթարկվում է գնդի (բրիգադի) հրամանատարին և համարվում է ենթակա սերժանտների ու շարքային կազմի զինծառայողների անմիջական պետը:

Հոդված 126.4. Գնդի (բրիգադի) սերժանտը պարտավոր է՝

- իր իրավասությունների սահմաններում իմանալ մարտական պատրաստության դեկավար փաստաթղթերը, ենթականերից պահանջել դրանց ճիշտ կատարումը, մասնակցել գնդի մարտական պատրաստության պլանավորմանը և իրականացնել ենթակա սերժանտների մասնագիտական պատրաստության հաշվառում,

- իրականացնել ստորաբաժանումների սերժանտների ծառայողական գործնեության արդյունքների ամենամսյա ամփոփում և գրավոր զեկուցել գնդի հրամանատարին,

- գումարտակի և վաշտի սերժանտների հետ անցկացնել ցուցադրական (յուրաքանչյուր ուսումնական փուլում հիմնական առարկաներից մեկական), հրահանգչամեթոդական, գործնական և ստուգողական պարապմունքներ,

- իմանալ ստորաբաժանումների յուրաքանչյուր սերժանտի ազգանունը, անունը, հայրանունը, գործնական ու բարոյահոգեբանական հատկանիշները, մինչև ծառայությունը նրա զբաղմունքը, ընտանեական դրությունը, մարտական պատրաստությունում նրա հաջողություններն ու թերությունները,

- իր իրավասությունների սահմաններում իմանալ գնդի սպառազինությունը, ռազմական և այլ տեխնիկայի կառուցվածքն ու շահագործման կանոնները, տիրապետել տեխնիկական անվտանգության սահմանված կանոններին,

- ցուցաբերել օգնություն գումարտակների սերժանտներին՝ մարտական պատրաստության պարապմունքների ճիշտ կազմակերպման նպատակով և վերահսկողություն սահմանել դրանց մեթոդապես ճիշտ անցկացման նկատմամբ,

- իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ նոր եկած սերժանտների ժամանակին ու պատշաճ ընդունման, բաշխման ու բոլոր տեսակի բավարարումների ապահովման համար, ցուցաբերել օգնություն նրանց կայացման ուղղությամբ,

- օգնություն ցուցաբերել գնդում սերժանտական խորհուրդների ձևավորման և դրանց աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ,

- իր իրավասությունների սահմաններում սահմանել վերահսկողություն գումարտակներում և առանձին վաշտերում մարտական պատրաստությունից անցկացվող պարապմունքների նկատմամբ,

- պահանջել ստորաբաժանումների սերժանտներից ու շարքային կազմի զինծառայողներից՝ ապահովել զինվորական կարգապահությունը, օրվա կարգացուցակի և ծառայողական ժամանակի ճշգրիտ պահպանումը, գնդի հրամանատարին անմիջապես զեկուցել զինվորական կարգապահության խախտումների, ինչպես նաև ստորաբաժանումների սերժանտների և շարքային կազմի զինծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական տույժերի ու խրախուսանքների, ենթակաների դիմումների վերաբերյալ,

- պահանջել ստորաբաժանումների սերժանտներից և շարքային կազմի զինծառայողներից անվտանգության կանոնների պահպանումը պարապմունքների անցկացման, հրաձգության, զորավարությունների ու առօրյա աշխատանքների կատարման ժամանակ,

- մասնակցել գնդում անցկացվող սպորտ-մասսայական միջոցառումներին,

- շաբաթվա մեջ մեկ անգամ վերահսկել գումարտակներում և առանձին վաշտերում անցկացվող առավոտյան մարզանքը, առավոտյան ստուգումն ու երեկոյան անվանականչը,

- իրականացնել վերահսկողություն գնդի օրվա վերակարգում ներգրավված սերժանտների և շարքային կազմի զինծառայողներին նախապատրաստման ու ծառայության կրման նկատմամբ, շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ գնդի հրամանատարի ցուցումով ստուգել ստորաբաժանումների սերժանտների և շարքային կազմի զինծառայողների կողմից ծառայության իրականացումը:>>:

ՀՈՂՎԱԾ 6. Կանոնագրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասում <<ավագների>> բառը փոխարինել <<վաշտերի սերժանտների>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 7. Կանոնագիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <<140.3.>> և <<140.4.>> հոդվածներով.

<< ԳՈՒՄԱՐՏԱԿԻ (ԴԻՎԻԶԻՈՆԻ) ՍԵՐՇԱՆՏԸ

Հոդված 140.3. Գումարտակի (դիվիզիոնի) սերժանտը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գումարտակի (դիվիզիոնի) ստորաբաժանումների սերժանտների ուսուցման, զինվորական դաստիարակության, կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի,

ստորաբաժանումների սերժանտների կողմից մարտական պատրաստության պարապմունքների որակով անցկացման, նրանց մասնագիտական պատրաստվածության պատշաճ ապահովման, ստորաբաժանումների սերժանտների ու շարքային կազմի զինծառայողների ֆիզիկական պատրաստվածության և նրանց արտաքին տեսքի համար:

Գումարտակի (դիվիզիոնի) սերժանտը ենթարկվում է գումարտակի հրամանատարին, իսկ ստորաբաժանումների սերժանտների հետ տարվող աշխատանքի հարցերով՝ գնդի (բրիգադի) սերժանտին և համարվում է գումարտակի (դիվիզիոնի) ստորաբաժանումների սերժանտների ու շարքային կազմի զինծառայողների անմիջական պետը:

Հոդված 140.4. Գումարտակի (դիվիզիոնի) սերժանտը պարտավոր է՝

- մասնակցել գումարտակի (դիվիզիոնի) մարտական պատրաստության պլանավորմանը և իրականացնել ստորաբաժանումների սերժանտների մասնագիտական պատրաստության հաշվառում,

- ստորաբաժանումների սերժանտների հետ անցկացնել ցուցադրական, հրահանգչամեթոդական, գործնական և ստուգողական պարապմունքներ,

- իմանալ ստորաբաժանումների յուրաքանչյուր սերժանտի ազգանունը, անունը, հայրանունը, գործնական ու բարոյահոգեբանական հատկանիշները, մինչև ծառայությունը նրա զբաղմունքը, ընտանեական դրությունը, մարտական պատրաստությունում նրա հաջողություններն ու թերությունները,

- իր իրավասությունների սահմաններում իմանալ գումարտակի (դիվիզիոնի) սպառազինությունը, ռազմական և այլ տեխնիկայի կառուցվածքն ու շահագործման կանոնները, տիրապետել տեխնիկական անվտանգության սահմանված կանոններին,

- օգնություն ցուցաբերել գումարտակում սերժանտական ենթախորհրդի ձևավորման և դրա աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ,

- իր իրավասությունների սահմաններում մասնակցել սպառազինության, ռազմական և այլ տեխնիկայի նախապատրաստմանը զորավարություններին և պարապմունքներին,

- ցուցաբերել օգնություն ստորաբաժանումների սերժանտներին՝ մարտական պատրաստության պարապմունքների ճիշտ կազմակերպման նպատակով և վերահսկողություն սահմանել դրանց մեթոդապես ճիշտ անցկացման նկատմամբ,

- իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ նոր եկած սերժանտների ժամանակին ու պատշաճ ընդունման, բաշխման ու բոլոր տեսակի բավարարումների ապահովման համար, ցուցաբերել օգնություն նրանց կայացման ուղղությամբ,

- իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ գումարտակի (դիվիզիոնի) ուսումնանյութական և տեխնիկական բազայի կատարելագործման ու սարքին պահելու ուղղությամբ,

- իր իրավասությունների սահմաններում սահմանել վերահսկողություն վաշտերում մարտական պատրաստությունից անցկացվող պարապմունքների նկատմամբ,

- պահանջել ստորաբաժանումների սերժանտներից ու շարքային կազմի զինծառայողներից՝ ապահովել զինվորական կարգապահությունը, օրվա կարգացուցակի և ծառայողական ժամանակի ճշգրիտ պահպանումը, գումարտակի հրամանատարին անմիջապես զեկուցել զինվորական կարգապահության խախտումների, ինչպես նաև ստորաբաժանումների սերժանտների և շարքային

կազմի զինծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական տույժերի ու խրախուսանքների, ենթակաների դիմումների վերաբերյալ,

- պահանջել ստորաբաժանումների սերժանտներից ու շարքային կազմի զինծառայողներից՝ ապահովել անվտանգության կանոնների պահպանումը պարապմունքների անցկացման, հրաձգության, զորավարությունների ու առօրյա աշխատանքների կատարման ժամանակ,

- յուրաքանչյուր ամիս ստորաբաժանումների սերժանտների հետ անցկացնել արդյունքների ամփոփում՝ մարտական պատրաստության, ծառայողական գործունեության, զինվորական կարգապահության վերաբերյալ և արդյունքների մասին զեկուցել գումարտակի (դիվիզիոնի) հրամանատարին ու գնդի (բրիգադի) սերժանտին,

- մասնակցել գումարտակում սպորտ-մասսայական միջոցառումների անցկացմանը,

- շաբաթվա մեջ մեկ անգամ վերահսկել վաշտերում անցկացվող վերկացը, առավոտյան մարզանքը, առավոտյան ստուգումն ու երեկոյան անվանականչը,

- իրականացնել վերահսկողություն գումարտակի (դիվիզիոնի) օրվա վերակարգում ներգրավված ենթակա անձնակազմի նախապատրաստման և ծառայության կրման նկատմամբ, ինչպես նաև շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ գումարտակի (դիվիզիոնի) հրամանատարի ցուցումով անձամբ ստուգել ստորաբաժանումներում սերժանտների ու շարքային կազմի զինծառայողների կողմից ծառայության իրականացումը>>:

ՀՈՂՎԱԾ 8. Կանոնագրքի 150-րդ հոդվածի 1-ին մասում <<(անձնախմբերի, ավագների)>> բառերը փոխարինել <<(ջոկերի սերժանտների)>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 9. Կանոնագրքի 151-րդ հոդվածին նախորդող վերնագրում <<ԱՎԱԳԸ>> բառը փոխարինել <<ՍԵՐՇԱՆՏԸ>> բառով:

ՀՈՂՎԱԾ 10. Կանոնագրքի 151-րդ հոդվածում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 11. Կանոնագրքի 152-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով.

2) 8-րդ մասում <<ղեկավարել>> բառից առաջ լրացնել <<որպես պարտադիր զինծառայող ամեն օր, իսկ որպես պայմանագրային զինծառայող՝ շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ անձամբ>> բառերը.

3) 9-րդ և 20-րդ մասերում <<հրամանատարների տեղակալներից>> բառերից հետո լրացնել <<(դասակների սերժանտներից)>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 12. Կանոնագրքի 153-րդ հոդվածին նախորդող վերնագրում <<ՏԵՂԱԿԱԼԸ>> բառից հետո լրացնել <<(ԴԱՍԱԿԻ ՍԵՐՇԱՆՏԸ)>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 13. Կանոնագրքի 153-րդ հոդվածում՝

1) առաջին նախադասությունում <<հրամանատարի տեղակալը>> բառերից հետո լրացնել <<(դասակի սերժանտը)>> բառերը.

2) երկրորդ նախադասությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 14. Կանոնագրքի 154-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում <<հրամանատարի տեղակալը>> բառերից հետո լրացնել <<(դասակի սերժանտը)>> բառերը.

2) 3-րդ մասում <<հրամանատարների>> բառից հետո լրացնել <<(ջոկերի սերժանտների)>> բառերը.

3) 6-րդ մասում <<անցկացնել>> բառից առաջ լրացնել <<շաբաթական ոչ պակաս, քան երկու անգամ դասակում ներկա լինել երեկոյան ստուգմանը, իսկ վերկացին անձամբ>> բառերը.

4) 9-րդ մասում <<ենթակաները>> բառից հետո լրացնել <<, իսկ առավոտյան ծառայության ներկայանալիս վաշտի հերթապահից ձշտել ենթակա անձնակազմի կարգապահության և առողջական վիճակի, ստացած առաջադրանքների մասին>> բառերը.

5) 11-րդ մասում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով:

ՀՈՂՎԱԾ 15. Կանոնագրքի 155-րդ հոդվածին նախորդող վերնագրում <<ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ>> բառից հետո լրացնել <<(ԶՈԿԻ ՍԵՐԺԱՆՏԸ)>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 16. Կանոնագրքի 155-րդ հոդվածում`

1) առաջին նախադասությունում <<հրամանատարը>> բառից հետո լրացնել <<(ջոկի սերժանտը)>> բառերը.

2) երկրորդ նախադասությունում <<և նրա տեղակալին (խմբի ավագին)>> բառերը փոխարինել <<դասակի սերժանտին>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 17. Կանոնագրքի 156-րդ հոդվածում`

1) առաջին պարբերությունում <<հրամանատարը>> բառից հետո լրացնել <<(ջոկի սերժանտը)>> բառերը.

2) 10-րդ մասում <<հրամանատարի տեղակալին (անձնախմբի ավագին)>> բառերը փոխարինել <<սերժանտին>> բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասեր`

<<- շաբաթական ոչ պակաս, քան երեք անգամ ջոկում ներկա լինել երեկոյան ստուգմանը, իսկ վերկացին անձամբ անցկացնել ջոկի անձնակազմի առավոտյան ստուգում.

- առավոտյան ծառայության ներկայանալիս վաշտի հերթապահից ձշտել ենթակա անձնակազմի կարգապահության և առողջական վիճակի, ստացած առաջադրանքների մասին:>>:

ՀՈՂՎԱԾ 18. Կանոնագրքի 157-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում <<հրամանատարին>> բառից հետո լրացնել <<(ջոկի սերժանտին)>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 19. Կանոնագրքի 164-րդ հոդվածի երրորդ և չորրորդ պարբերություններում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով:

ՀՈՂՎԱԾ 20. Կանոնագրքի 173-րդ հոդվածի`

1) առաջին և երկրորդ պարբերություններում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով.

2) չորրորդ պարբերությունում <<Պահեստային>> բառը փոխարինել <<Պահասենյակի և զինաբուրգի պահեստային>> բառերով, իսկ <<(արկղիկում)>> բառից հետո լրացնել <<, իսկ զենքի (սպառազինության) հետ կրվող զինամթերքի արկղերի պահեստային բանալիները պահվում են զենքի պահասենյակում` առանձին պարկով, որը կնքվում է ստորաբաժանման հրամանատարի կնիքով>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 21. Կանոնագրքի 174-րդ հոդվածի առաջին պարբերության չորրորդ նախադասությունում և երկրորդ պարբերությունում, 189-րդ հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասությունում, 198-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում և 200-րդ հոդվածում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով:

ՀՈՂՎԱԾ 22. Կանոնագրքի 233-րդ հոդվածում <<և վաշտի ավագի>> բառերը փոխարինել <<(դասակների սերժանտների) և վաշտի սերժանտի>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 23. Կանոնագրքի 235-րդ հոդվածում`

1) առաջին նախադասությունում <<հրամանատարների տեղակալները (ջոկերի հրամանատարները)>> բառերը փոխարինել <<և ջոկերի սերժանտները>> բառերով:

2) երկրորդ նախադասությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

3) երրորդ նախադասությունում <<ավագի հրամանով դասակների հրամանատարների տեղակալները և ջոկերի հրամանատարները>> բառերը փոխարինել <<սերժանտի հրամանով դասակների և ջոկերի սերժանտները>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 24. Կանոնագրքի 236-րդ հոդվածի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ:

<<Առավելության ստուգման ընթացքում ջոկերի հրամանատարները (ջոկերի սերժանտները) ապահովում են թերությունների վերացումը և ստուգման արդյունքների մասին զեկուցում դասակների հրամանատարների տեղակալներին (դասակների հրամանատարներին), իսկ վերջիններս՝ վաշտի սերժանտին:>>:

ՀՈՂՎԱԾ 25. Կանոնագրքի 237-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերության առաջին նախադասությունում <<ավագի կամ դասակների հրամանատարների տեղակալներից>> բառերը փոխարինել <<սերժանտի կամ դասակների սերժանտներից որևէ>> բառերով:

2) առաջին պարբերության երրորդ նախադասությունում <<հրամանատարների տեղակալները (ջոկերի հրամանատարները)>> բառերը փոխարինել <<և ջոկերի սերժանտները>> բառերով:

3) առաջին պարբերության չորրորդ նախադասությունում <<ավագին>> բառը փոխարինել <<վաշտի սերժանտին>> բառերով:

4) երկրորդ պարբերության առաջին նախադասությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

5) երկրորդ պարբերության երրորդ նախադասությունում <<հրամանատարի տեղակալը>> բառերը փոխարինել <<սերժանտը>> բառով:

6) երրորդ պարբերության առաջին նախադասությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

7) երրորդ պարբերության երրորդ նախադասությունում <<հրամանատարները>> բառը փոխարինել <<սերժանտները>> բառով:

8) չորրորդ պարբերության առաջին նախադասությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 26. Կանոնագրքի 241-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում <<հրամանատարները և դասակի հրամանատարների տեղակալները>> բառերը փոխարինել <<և դասակների սերժանտները>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 27. Կանոնագրքի 243-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով, իսկ <<հրամանատարների տեղակալներից>> բառերը փոխարինել <<սերժանտներից որևէ>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 28. Կանոնագրքի 246-րդ հոդվածի չորրորդ պարբերության երկրորդ նախադասությունում <<հրամանատարների տեղակալները>> բառերը փոխարինել <<սերժանտները>> բառով:

ՀՈՂՎԱԾ 29. Կանոնագրքի 247-րդ հոդվածի երրորդ պարբերությունում <<հրամանատարների տեղակալները>> բառերը փոխարինել <<սերժանտները>> բառով, իսկ <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 30. Կանոնագրքի 249-րդ հոդվածի չորրորդ պարբերությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 31. Կանոնագրքի 256-րդ հոդվածի երրորդ պարբերության առաջին նախադասությունում <<վաշտի ավագի>> բառերը փոխարինել <<վաշտի սերժանտի>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 32. Կանոնագրքի 274-րդ հոդվածի երրորդ պարբերությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով, իսկ <<հրամանատարի տեղակալը>> բառերը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 33. Կանոնագրքի 275-րդ հոդվածի առաջին պարբերությունում՝

1) 1-ին մասում <<հրամանատարների տեղակալները>> բառերը փոխարինել <<սերժանտները>> բառով,

2) 2-րդ մասում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 34. Կանոնագրքի 306-րդ հոդվածի երրորդ նախադասությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 35. Կանոնագրքի 307-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերության առաջին նախադասությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով,

2) առաջին պարբերության երկրորդ նախադասությունում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով,

3) հինգերորդ պարբերությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 36. Կանոնագրքի 308-րդ հոդվածի՝

1) առաջին պարբերությունում.

ա. 4-րդ մասում <<ավագի>> բառը փոխարինել <<վաշտի սերժանտի>> բառերով.

բ. 5-րդ և 10-րդ մասերում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով,

գ. 9-րդ և 16-րդ մասերում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտների>> բառով,

դ. 12-րդ մասում <<ավագից>> բառը փոխարինել <<սերժանտից>> բառով.

2) երրորդ պարբերությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 37. Կանոնագրքի 309-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում և 311-րդ հոդվածի երկրորդ պարբերության 9-րդ կետում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով:

ՀՈՂՎԱԾ 38. Կանոնագրքի 315-րդ հոդվածի առաջին պարբերության 11-րդ կետում <<ավագների>> բառը փոխարինել <<սերժանտների>> բառով:

ՀՈՂՎԱԾ 39. Կանոնագրքի 347-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 40. Կանոնագրքի 352-րդ հոդվածի՝

1) առաջին պարբերության երկրորդ նախադասությունում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով.

2) վեցերորդ պարբերությունում՝

ա. առաջին նախադասությունում <<ավագի>> բառից առաջ լրացնել <<անձնախմբի>> բառը,

բ. երրորդ նախադասությունում <<ավագը>> բառը փոխարինել <<սերժանտը>> բառով:

ՀՈՂՎԱԾ 41. Կանոնագրքի 357-րդ հոդվածի չորրորդ պարբերությունում <<ավագին>> բառը փոխարինել <<սերժանտին>> բառով:

ՀՈՂՎԱԾ 42. Կանոնագրքի 359-րդ հոդվածի առաջին պարբերության առաջին և երկրորդ նախադասություններում <<վաշտի ավագի>> բառերը փոխարինել <<վաշտի սերժանտի>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 43. Կանոնագրքի 407-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում <<ավագները>> բառը փոխարինել <<սերժանտները>> բառով:

ՀՈՂՎԱԾ 44. Կանոնագրքի 437-րդ հոդվածի առաջին նախադասությունում <<ավագին>> բառը փոխարինել <<վաշտի սերժանտին>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 45. Կանոնագրքի 12-րդ հավելվածում՝

1) վաշտի հիվանդների գրանցման գրքում <<ավագ>> բառը փոխարինել <<սերժանտ>> բառով,

2) վաշտի զենքի և զինամթերքի բացթողման գրքի ծանոթության՝

ա. 1-ին կետի առաջին նախադասությունում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով, իսկ <<վաշտի ավագի>> բառերը փոխարինել <<վաշտի սերժանտի>> բառերով,

բ. 1-ին կետի երկրորդ նախադասությունում <<հրամանատարի տեղակալը>> բառերից հետո լրացնել <<(դասակի սերժանտը)>> բառերը,

գ. 2-րդ կետում <<ավագի>> բառը փոխարինել <<սերժանտի>> բառով,

3) վերակարգի թերթիկում <<դասակի հրամանատարի տեղակալ>> բառերից հետո լրացնել <<(դասակի սերժանտ)>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 46. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում 1-ին ընթերցմամբ ընդունված <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Զաքարյան	Նախագծի հոդված 5. 1) <<Իրականացնել վերահսկողություն գնդի օրվա վերակարգում ներգրավված սերժանտների և շարքային կազմի զինծառայողներին նախապատրաստման ու ծառայության կրման նկատմամբ, շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ>> նախադասությունից հետո լրացնել <<, իսկ մարտական հերթապահության ընթացքում ոչ պակաս, քան 3 անգամ>> բառերով: Հոդված 7. 2) <<Իրականացնել վերահսկողություն գումարտակի (դիվիզիոնի) օրվա վերակարգում ներգրավված ենթակա անձնակազմի նախապատրաստման և ծառայության կրման նկատմամբ, ինչպես նաև շաբաթական ոչ պակաս, քան մեկ անգամ>> նախադասությունից հետո լրացնել <<, իսկ մարտական հերթապահության ընթացքում ոչ պակաս, քան 3 անգամ>> բառերով:	Առաջարկությունները նպատակահարմար չէ ներառել օրենքի նախագծում, քանի որ մարտական հերթապահության ընթացքի նկատմամբ հսկողության կարգը սահմանված է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով, իսկ զորամասի համապա-տասխան պաշտոնատար անձանց կողմից հսկողության իրականացման ժամանակացույցը սահմանում է զորամասի հրամանատարը: